

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

(Օգոստոս 2015)



Հրաժարում պատասխանատվությունից

ՄՄԿ-ն տեղեկատվության հավաքումն իրականացրել է ամենայն պատասխանատվությամբ/ճշգրտությամբ: ՄՄԿ-ն տեղեկատվություն է տրամադրում իր գիտելիքների և խղճի համապատասխան: Այնուամենայնիվ, ՄՄԿ-ն չի կարող ստանձնել պատասխանատվություն ներկայացված տեղեկատվության ճշգրտության համար: Ավելին, ՄՄԿ-ն պատասխանատվություն չի կրում իր կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա արված եզրակացությունների կամ ձեռքբերված արդյունքների համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|---|---|
| I. ՆԱԽԱԲԱՆ..... | 2 |
| II. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ..... | 2 |
| III. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ..... | 4 |
| IV ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ..... | 4 |
| V. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ..... | 5 |
| VI. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ..... | 6 |
| VII. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻՆ..... | 7 |
| VIII. ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ..... | 8 |

I. ՆԱԽԱԲԱՆ

Տարիներ կամ ամիսներ ընդունող երկրում մնալուց հետո տուն վերադառնալը պահանջում է նախապատրաստական միջոցառումներ: Սովորաբար, ամենաառաջին փուլը նախատեսում է սահմանահատում և, համապատասխանաբար, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերում և ընթացակարգերի պահպանում:

Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, որոնց 16 տարին լրացել է, անկախ բնակության վայրից, կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության անձնագիր: Արտասահմանում գտնվող հայերը կարող են դիմել անձնագիր ստանալու կամ անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգելու համար Հայաստանի Հանրապետության դեսպանատներ կամ հյուպատոսական ծառայություններ: Արտասահմանում բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք չունեն վավերական անձնագիր կամ ունեն նախկին Սովետական միության ժամկետանց անձնագիր, սակայն շտապ պետք է վերադառնալ Հայաստան, հյուրընկալող երկրում դեսպանատան կամ հյուպատոսական ծառայության կողմից կարող է տրվել վերադարձի վկայական (ժամանակավոր, միանգամյա օգտագործման ճամփորդական փաստաթուղթ): Վերադարձի վկայական կարող է տրամադրվել նաև հարկադիր վերադարձի դեպքում, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին չունի վավերական ճամփորդական փաստաթուղթ:

2012 թվականին Հայաստանի Հանրապետությունում ներմուծվել է կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր, ինչպես նաև նույնականացման էլեկտրոնային քարտ: Կենսաչափական անձնագիրը ծառայում է որպես ճամփորդական փաստաթուղթ, իսկ նույնականացման քարտը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործման համար: Կենսաչափական անձնագրերը պարունակում են նկար, կենսաչափական անձնագրի տիրոջ մատնադրոշմի թվային պատկերը և էլեկտրոնային ստորագրությունը: Ինչպես կենսաչափական անձնագրերը, այնպես էլ նույնականացման քարտերը տրվում են տասը տարի վավերականության ժամկետով: Կենսաչափական անձնագրի արժեքը սահմանված է 25 հազար դրամ: Նույնականացման քարտի արժեքը սահմանված է 3 հազար դրամ:

Վերադառնալիս վավերական անձնագիր ունեցող վերադարձող միգրանտները Հայաստանի Հանրապետություն ժամանելուն պես չեն հաշվառվում սահմանի անցման կետերում, և Հայաստանի Հանրապետությունում վերադարձող միգրանտների թվի վերաբերյալ վիճակագրություն չի կազմվում: Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացին միայն պետք է տեղեկացնի համապատասխան պետական մարմիններին և հաշվառվի նոր հասցեում, եթե նա նախօրոք գրանցել է իր արտագաղթելու հանգամանքը:

Արտասահմանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխաները, անկախ նրանց ծնվելու վայրից, ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և պետք է հնարավորինս շուտ հաշվառվեն Հայաստանի Հանրապետության դեսպանատանը կամ հյուպատոսական ծառայությունում:

II. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգին, օրենսդրությանը (ներառյալ այն սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկը, որոնց բուժումն իրականացվում է պետպատվերի շրջանակում) և բուժհաստատությունների ցանկին կարելի է ծանոթանալ ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքից www.moh.am:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղեր ստանալու իրավունք ունեն՝

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները. (հաշմանդամության խումբը (կարգը)) սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո գործում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով, որը բժշկական հետազոտություն է իրականացնում և սահմանում է հաշմանդամության խումբը
- Հաշմանդամ երեխաները (մինչև 18 տարեկան)

- հայրենական պատերազմի վետերաններ և նրանց հավասարեցված անձինք
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև միակողմանի ծնողագուրկ երեխաները (մինչև 18 տարեկան)
- բազմազավակ (մինչև 18 տարեկան, չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաները
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ
- հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչև 18 տարեկան)
- մինչև 7 տարեկան երեխաները

Բնակչության սոցիալական խմբերը, որոնց պատկանող անձանց հիվանդության դեպքում դեղերը տրվում են 50 տոկոս զեղչով հանդիսանում են 3-րդ խմբի հաշմանդամները, բռնադատվածները, միայնակ չաշխատող կենսաթոշակառուները, միայն չաշխատող կենսաթոշակառուներից բաղկացած (այդ թվում՝ իրենց խնամքի տակ անչափահաս երեխա ունեցող) ընտանիքները, միայնակ մայրերի երեխաները (մինչև 18 տարեկան): Չաշխատող կենսաթոշակառուներին դեղերը տրվում են 30 տոկոս զեղչով:

Պետական երաշխավորված անվճար հիվանդանոցային առողջապահական ծառայություններ ստանալու համար հիվանդները պետք է ներկայացնեն ուղեգիր տեղամասային պոլիկլինիկաներից և անձնագիր, բացառությամբ «այն անհետաձգելի դեպքերի, որոնք չեն պահանջում շուրջօրյա հսկողություն, երբ հիվանդը չունի անձը հաստատող փաստաթուղթ», իսկ սոցիալապես անապահով անձինք և նրանք, ովքեր ընդգրկված են առանձին /հատուկ/ խմբերում պետք է ներկայացնեն անձը հաստատող փաստաթուղթ և սոցիալական կարգավիճակը հաստատող փաստաթղթերը:

Հայրենիք վերադարձած անձը, զեղչով կամ արտոնյալ պայմաններով դեղ ստանալու համար, պետք է դիմի իր տարածքային պոլիկլինիկա և ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ (Հայաստանի Հանրապետության անձնագիր կամ ինքնությունը և հայկական քաղաքացիությունը հաստատող ցանկացած այլ փաստաթուղթ) (երեխաների դեպքում ծննդյան վկայականը), ինչպես նաև սոցիալապես խոցելի այս կամ այն խմբին պատկանելու և զեղչով կամ արտոնյալ պայմաններով դեղ ստանալու իրավունք ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը: Վերադարձած անձը, դեղ ստանալու համար, պետք է դեղատանը ցույց տա իր համար դուրս գրված դեղատոմսը և ինքնությունը հաստատող վավերական փաստաթուղթ:

Եթե վերադարձած անձինք ունեն այնպիսի դեղորայքի կարիք, որը պետք է ներկրվի այլ երկրներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» թիվ 581 որոշման համաձայն Հայաստանի Ժամանող ֆիզիկական անձն իրավունք ունի անձնական օգտագործման համար ներմուծելու 10-ական անվանում դեղ, յուրաքանչյուրից երեքական սպառողական փաթեթ, եթե փաստաթղթերով հիմնավորված չէ բուժման կուրսի համար անհրաժեշտ ավելի մեծ քանակը: Հետևաբար, վերադարձած անձը պետք է ունենա գրանցման հավաստագիր, որ նշված դեղն առկա չէ և գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն) և արտասահմանյան բժշկի կողմից տրված հավաստագիր, որ նշված դեղերն անհրաժեշտ են իր բուժման համար և պետք է դրանք ներկայացնի սահմանին գործող Մաքսային տեսչությանը:

Եթե վերադարձած անձինք իրավասու չեն օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունից, կարող են գնել առողջապահության ապահովագրության պայմանագրեր: Կամավոր բժշկական ապահովագրության ոլորտը կարգավորվում է 2004թ. ընդունված «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և 1996թ. ընդունված «Բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով: Այսօր մեկ անձի համար բժշկական ապահովագրության

փաթեթի գինը տարբեր մասնավոր ապահովագրական ընկերություններում տատանվում է տարեկան \$230-350 ԱՄՆ: Հայաստանի մասնավոր ապահովագրական ընկերությունները անհատական բժշկական կամավոր ապահովագրության համար պահանջում են անձնագիր և սոցիալական քարտ, որպեսզի բժշկական ապահովագրական դիմումը ուժի մեջ մտնի: Մանրամասների համար այցելեք <http://www.reso.am>; <http://www.ingoarmenia.am>; <http://armeniainsurance.am>:

III. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Աշխատանքային օրենսգրքով և այլ իրավական ակտերով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության տվյալներով 2015թ. հունվարի 1-ի դրությամբ գործազրկության ցուցանիշը եղել է 17.1, իսկ գործազուրկների թվաքանակը կազմել է 65.9 հազար մարդ:

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիրը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից, որից հետո ներառվում է պետական բյուջեում և ներկայացվում Ազգային ժողով: Ծրագիրը բաղկացած է զբաղվածության պետական հետևյալ ծրագրերից՝

- Աշխատաշուկայում անընդհանրացնել անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում
- Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում
- Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում
- Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում
- Աշխատաշուկայում անընդհանրացնել անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում
- Աշխատաշուկայում անընդհանրացնել անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում
- Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում
- Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում
- Աշխատաշուկայում անընդհանրացնել անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում

Ծրագրերի մանրամասն նկարագրությունն առկա է Զբաղվածության պետական գործակալության կայքում՝ www.employment.am:

Վերադարձողները համարվում են աշխատաշուկայում անընդհանրացնել անձինք և օգտվում են զբաղվածության պետական ծրագրերից:

IV ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ներկայումս, ֆինանսական միջոցների սղության պատճառով Հայաստան վերադարձողներին կացարանով ապահովելու պետական ծրագիր չկա: ՀՀ միգրացիոն պետական ծառայությունը ժամանակավոր կացարան /ամենաերկարը 3 ամսով/ է տրամադրում ապաստան հայցողներին՝ յուրաքանչյուր դեպք մանրամասն ուսումնասիրելու և վերջնական որոշում կայացնելու արդյունքում:

Ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13 -ի թիվ 614-Ն Ժամանակավոր կացարան տրամադրելու կարգը և պահանջները հաստատելու մասին որոշման, ժամանակավոր կացարան կարող է տրամադրվել է նաև անօթևան քաղաքացիներին, ովքեր հայտնվել են իրենց կյանքի դժվարին պայմաններում և օգնել նրանց լուծել բնակարանային և սոցիալական խնդիրները: Ժամանակավոր կացարանը տրամադրվում է 90 օր ժամկետով: Ժամանակավոր կացարանի համար պետք է դիմել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Եթե վերադարձողների ֆինանսական վիճակը թույլ չի տալիս սեփական բնակարան գնել, Երևանում բնակարան վարձելու նվազագույն շուկայական գինը 100 ԱՄՆ դոլար է, իսկ մարզերում՝ 50 ԱՄՆ դոլար:

Հանրային ծառայությունների սակագներին կարելի է ծանոթանալ Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքից՝ <http://www.psrc.am/am>:

Անշարժ գույքի գործակալություններ՝ www.myrealty.am; www.akcern.am; www.elate.am:

V. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը ներկայումս ներառում է՝

- Պետական սոցիալական աջակցության ծրագրեր, ինչպիսիք են ընտանեկան նպաստները, հաշմանդամության, ծերության և այլ սոցիալական թոշակները և երեխայի նպաստը /մինչև 2 տարեկան/,

- Սոցիալական աջակցության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների, մասնավորապես բժշկական և սոցիալական վերականգնողական ծրագրեր, տնային սոցիալական ծառայություններ ծերերի և հաշմանդամների համար, ծերանոցներ, մանկատներ և գիշերօթիկ դպրոցներ:

- Պետական սոցիալական ապահովագրական ծրագրեր՝ բաղկացած ծերության և հաշմանդամության թոշակներից, ինչպես նաև ժամանակավոր հաշմանդամության և հղիության նպաստներ

- Աշխատանքային ծրագրեր՝ գործազուրկների վերապատրաստում և հանրային /կամ նման/ աշխատանքներ

- Արտոնությունների համակարգ բնակչության անապահով խմբերի համար:

Նպաստների մասին մանրամասն տեղեկությունները և համապատասխան բաժինների և վարչությունների կոնտակտային տվյալներն առկա են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում՝ www.mss.am:

Պետական բյուջեով ֆինանսավորվող տարեցների և հաշմանդամների սոցիալական աջակցության ծրագրերը ներառում են՝

- Հաշմանդամներին անվճար պրոթեզներով և օրթոպեդիկ պարագաներով ապահովելը և այդ պարագաների վերանորոգումը:
- Միայնակ և ծեր հաշմանդամներին տնային պայմաններում սոցիալական ծառայություններ մատուցելու ծրագիրը:

Պետական կենսաթոշակային համակարգը ներառում է.

- 1) Ծերության թոշակ
- 2) Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ
- 3) Հաշմանդամության թոշակ
- 4) Ընտանիքի կերակրողին կորցրածների թոշակ

Այս թոշակների հիմքում ընկած է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գանձումը և դրանք մտնում են աշխատանքային /ապահովագրական/ թոշակների համակարգում:

Հայաստանում կենսաթոշակային տարիքը 63 տարեկանն է, իսկ սոցիալական կենսաթոշակի համար՝ 65 տարեկանն է (ավելի ցածր այն անձանց համար, որոնք աշխատել են առանձնապես ծանր կամ վնասակար պայմաններում):

Դուք կարող եք ծանոթանալ Կենսաթոշակի տեսակներին, նրանց հաշվարկին, նշանակմանը և անհրաժեշտ փաստաթղթերին հետևյալ կայքէջում՝ <http://www.ssss.am/arm/pensions-system/pension-security>: Կենսաթոշակի հաշվիչի միջոցով կարող եք մուտքագրել Ձեր աշխատանքային ստաժը, հաշմանդամության դեպքում նաև կարգը, և տեսնել Ձեր կենսաթոշակի չափը:

VI. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որն իրականացնում է կրթության և գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը (www.edu.am):

Նախարարոցական հաստատությունները (տարվա ընթացքում 10 ամսից ոչ պակաս աշխատող) ապահովում են 1 տարեկանից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը և ուսուցումը:

Հանրակրթական դպրոցներ են համարվում տարրական, հիմնական, ավագ և միջնակարգ ուսումնական հաստատությունները և վարժարանները, որոնք իրականացնում են հանրակրթական ծրագրեր:

Քոլեջները հաշվառված են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդհանուր թվում: Քոլեջներում մասնագետների պատրաստումն իրականացվում է միջին մասնագիտական կրթական ծրագրով, ինչպես նաև հանրակրթական և արհեստագործական կրթական ծրագրերով: Մանրամասն տեղեկությունների համար այցելեք՝ <http://www.mkuzak.am>:

Հանրակրթության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնական հանրակրթական ծրագրերի շրջանակում կրթական և կրթածանոցային ծառայությունների մատուցման, ինչպես նաև հանրակրթության համակարգի զարգացման ծրագրերի իրականացման եղանակով: Այս բնագավառում շահառուներ են հանդիսանում 6-18 տարեկան երեխաները:

Վերադարձող աշակերտների կամ ուսանողների համար հատուկ պահանջվող փաստաթղթեր չկան: Մեկ այլ դպրոց կամ համալսարան ընդունվելու համար նրանք պետք է ներկայացնեն փաստաթուղթ, որը վկայում է, որ աշակերտը կամ ուսանողը տեղափոխվել է դպրոցի կամ համալսարանի հաջորդ դասարան կամ կուրս: Հայաստանում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և ավարտվում է մայիսի վերջին:

Հայաստանում **բարձրագույն մասնագիտական կրթություն** կարելի է ստանալ պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում /ԲՈՒՀ/՝ վճարովի և անվճար հիմունքներով:

Անվճար կրթության միջոցով պետությունը Հայաստանի քաղաքացիներին ապահովում է անվճար բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը՝ մրցակցային հիմունքներով: Բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստումը իրականացվում է 23 պետական բուհերում և դրանց 12 մասնաճյուղերում: 2001-2002 ուստարուց սկսած պետական բուհերում կրթությունը իրականացվում է երկաստիճան համակարգով /բակալավրիատ և մագիստրատուրա/:

Բուհերը պատրաստում են մոտ 220 մասնագիտությունների տեր շրջանավարտներ՝ հեռակա և ստացիոնար բաժիններում, անվճար և վճարովի հիմունքներով: ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1323-Ն որոշման համաձայն՝ 2013 թվականի սեպտեմբերի 1-ից պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում կտրամադրի յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող

անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50-ից 100 տոկոսի չափով:

Արտասահմանյան դիպլոմների ստուգումը և հաստատումը իրականացվում է ՀՀ Ակադեմիական փոխձանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոնի կողմից (Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Ամիրյան փ. 27; Հեռ/Ֆաքս. (+374 10) 53 091.04; փոստ info@armenic.am).

Արտասահմանյան դիպլոմը ստուգելու և հաստատելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝ վերջնական թեզը, դիպլոմը /բնօրինակը վավերացված պատճենի հետ/, և ետազոտական աշխատանքների ցանկը, ա նձնագիրը: Ստուգման և հաստատման գործընթացը տևում է մոտավորապես 2 ամիս: Երբ պարտադիր գործընթացը ավարտվում է, գործակալությունը տալիս է ընդունման վկայական, որը հավաստում է, որ արտասահմանյան դիպլոմը ՀՀ Կառավարության կողմից ստուգվել և հաստատվել է:

Հայերենի համապատասխան իմացությունը հասարակությունում միգրանտների վերաինտեգրման կարևոր նախապայմաններից մեկն է: Հայերենին տիրապետելու շնորհիվ նրանք կկարողանան ընդունվել ուսումնական հաստատություններ և քոլեջներ: Միգրանտների հետ աշխատող կազմակերպությունների մեծ մասը կարող է աշխատանքի ընդունել ուսուցիչների և կազմակերպել հայերենի դասընթացներ, եթե վերադարձած անձանց համար առկա է նման անհրաժեշտություն: Գոյություն ունեն մի շարք կազմակերպություններ, ՀԿ-ներ և կրթական հաստատություններ, որոնք կազմակերպում են հայերենի դասընթացներ: ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը, ըստ պահանջի, կարող է տեղեկատվություն տրամադրել հայերենի առկա դասընթացների վերաբերյալ կամ, անհրաժեշտության դեպքում, օգնել հատուկ խմբերի համար այդպիսի դասընթացներ կազմակերպելու հարցում: ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում (www.edu.am) «Հետադարձ կապի» «Հաճախ տրվող հարցեր» բաժնում տեղադրվում են կրթության համակարգի վերաբերյալ քաղաքացիներին հետաքրքրող հարցերը:

Վարձեր, վարկեր և թոշակներ

Պետական և ոչ պետական բուհերի մեջ վարձերի մեծ տարբերություն կա: Ներկայումս ուսման վարձը կախված է նրանից, թե տվյալ մասնագիտությունը որքանով է արդիական: Ուսման վարձը մեկ տարվա համար պետական բուհերում կազմում է 400 ԱՄՆ դոլար /մի քանի վճարումներով/: Համաձայն ՀՀ Կառավարության թիվ 1986 որոշման «ՀՀ Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին թոշակ շնորհելու կարգի հաստատման մասին» /ընդունվել է 2005 թ. սեպտեմբերի 8-ին/, ուսանողը կարող է թոշակ ստանալ մրցակցության հիմունքներով՝ համաձայն ընդունելության քննությունների ժամանակ ստացած սկզբնական գնահատականների: Բարձրագույն ուսումնական հաստատությունները շնորհում են նաև գերազանցության թոշակներ: Ներկայումս որոշ մասնավոր բանկեր սկսել են ուսումնական վարկեր տրամադրել ուսանողներին՝ տարեկան 15% միջին տոկոսադրույքով: Այս տեսակի վարկերի ամենաերկար ժամանակահատվածը 1 տարի է, իսկ գումարի չափը՝ 1000 ԱՄՆ դոլար:

VII. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻՆ

2012 թվականից Միգրացիոն պետական ծառայությունն (ՄՊՕ) իրականացնում է մի ծրագիր, որի նպատակն է արտերկրից Հայաստան վերադարձած հայերի արդյունավետ վերաինտեգրմանը նպաստող պայմանների ստեղծումը: Վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում աջակցությունն իրականացվում է երկու ուղղություններով՝ խորհրդատվություն և ծառայությունների մատուցում: Միգրանտները և ռեմիգրանտները կարող են ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն զանգահարելով Միգրացիոն պետական ծառայության Թեժ գիծ՝ (+374) 1026-41-63 կամ այցելելով www.smsmta.am կայքը:

ՀՀ Միգրացիոն պետական ծառայության www.backtoarmenia.am կամ www.tundardz.am վեբ պորտալը հնարավորություն են տալիս օգտվողներին ստանալու օգտակար տեղեկություններ Հայաստանի կրթական, առողջապահական համակարգերի և զինվորական ծառայության վերաբերյալ: Բացի այդ, կայքը հնարավորություն է տալիս արտասահմանում գտնվող հայ միգրանտներին ուղղակիորեն հարցեր ողղել համապատասխան պետական մարմիններին: Միգրացիոն պետական ծառայության կառուցվածքում գործող Վերաինտեգրման ուղղորդման կենտրոնը (ՎՈՒԿ) վերադարձած անձանց գրանցում և պաշտոնապես ուղղորդում է պետական ծառայություններին և զբաղվածության ծրագրերին (Հասցեն՝ Երևան, Հր. Քոչար 4; հեռախոս՝ +374 (0)10 22 49 25; կայքէջ՝ <http://www.smsmta.am>; էլ-փոստ՝ externalrelations.sms@gmail.com):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) Զբաղվածության պետական գործակալության (ԶՊԳ) համակարգում գործող միգրացիոն ռեսուրս կենտրոնները մատուցում են վերաինտեգրման ծառայություններ վերադարձող միգրանտներին և խորհրդատվական ծառայություններ՝ պոտենցիալ միգրանտներին (www.employment.am):

Վերադարձող միգրանտների վերաինտեգրմանն ուղղված ծրագրեր և նախաձեռնություններ են իրականացնում հետևյալ միջազգային և հասարակական կազմակերպությունները՝

- Միգրացիայի միջազգային կազմակերպություն
- Հայկական կարիտաս
- Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ
- Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամ
- Մարդը կարիքի մեջ ՀԿ

Մանրամասների համար տես «Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ուղղորդման ուղեցույցը» հետևյալ կայքէջերում՝

http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=47&products_id=1239
և http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=47&products_id=1240

VIII. ԿՈՆՏԱԿՏՍՑԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

ՀՀ օրենսդրությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգից՝ www.laws.am:

ՀՀ բանկային համակարգի և տարադրամի փոխանակման մասին տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ կայքերից՝ www.cba.am; www.banks.am:

Միջազգային, ոչ կառավարական, մարդասիրական կազմակերպություններ

Միգրացիայի միջազգային կազմակերպություն Հայաստանի առաքելություն

Երևան, Պետրոս Ադամյան 14 Հեռախոս՝ 374 10 585692

www.iom.int/Armenia

Բիզնեսի աջակցման կենտրոն

Երևան, Եվմայյան 6, «Բիզնես պալե» կենտրոն, 2-րդ հարկ Հեռախոս՝ (+374 10) 57 47 78, (+374 10) 53 23 13, (+374 60) 53 21 13, (+374 99) 57 47 78, (+374 77) 57 47 78 bsc@bsc.am, marketing@bsc.am

<http://www.bsc.am>

Հայկական Կարիտասի գլխամասային գրասենյակ

Գյումրի, Վազգեն Մարգարյան 8, նրբանցք 3 Հեռախոս՝ +374 312 57201

Երևան, Չայկովսկու 34, բն.23 Հեռախոս՝ +374 10 56 57 66 caritas@cararm.am www.caritasarm.am;

<http://www.reintegratiqncaritas.be/en/cquntry-informatiqn/asia/armenia.html>

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

Երևան 0026, Գարեգին Նժդեհի 42 Հեռախոս՝ (+374 10) 444792, 444793, 444761, 444732 Հեռապատճեն՝ (+374 10) 444792; URL: <http://www.mission.am>; Էլեկտրոնային հասցեն՝ org@ngo.mission.am

Հայկական Կարմիր Խաչի ընկերություն Պարոնյան

21/1, Երևան 0015, Հայաստան Հեռ./Հեռապատճեն՝ (+374

10) 583630 Էլ. հասցե՝ redcross@redcross.am Կայք՝

www.redcross.am

«Վերադարձ Հայաստան» հիմնադրամ

Հանրապետության 37 Հեռախոս՝ 374 60 464660 contact@repatarmeria.org <http://repatarmeria.org/eng>

Հայաստանի գործատուների հանրապետական միություն

Երևան, Սովսես Խորենացի 26ա Հեռախոս՝ +37410 527 421 ruea@employers.am www.employers.am

«ՏԱՆԺԵՌ» կադրային գործակալություն

Հասցե՝ Կապյան 7, 2-րդ մուտք, բն. 11, Երևան

Հեռախոս՝ (+37410) 27-53-10, (+37460) 529-529; (+37491) 29-18-92 Էլ. հասցե՝ tanger@tanger.am

<http://www.employers.am/Firms.aspx?UniqnId=30&lang=arm> (հայերեն) և <http://www.employers.am/Firms.aspx?UniqnId=30&lang=eng> (անգլերեն)

<http://www.employers.am/Firms.aspx?UniqnId=30&lang=eng> (անգլերեն)

«ԱՄՔՈՐ» (միավորված մեթոդիստների օգնության կոմիտե), հայկական մասնաճյուղ Կարապետ

Ուլինցի 14, Երևան, Հայաստան UMCOR թրաֆիքինգի թեժ գիծ՝ 0-800-50-558 Հեռախոս՝ +374 (10) 24

81 41, 28 29 77 Հեռապատճեն՝ +374 (10) 24 92 15 Էլ: հասցե՝ umcor@umcor.am Կայք՝

<http://www.umcor.am>

Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակի (ՆԻՖԳ) Հայաստանի ներկայացուցչություն

Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Վ. Սարգսյան 10, «Պիացա Գրանդե», 3-րդ հարկ

Հեռախոս՝ +374 60 61 3036 <http://www.ofii.fr>; [facebqk.com/TIAprject](https://www.facebook.com/TIAprject); <http://ec.eurqpa.eu/immigratiqn>

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի Հայաստանի առաքելություն

Երևան, Մարշալ Բաղրամյան 2, բն. 50; Հեռախոս՝ +374 93 25 92 39 www.migrant.am

Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամ (ՖՀԶՀ)

Երևան 0037, Ազատության պողոտա 10/7; Հեռախոս՝ + 374 10 201840; Ֆաքս՝ + 374 10 205840;

Համացանցային կայքէջը՝ www.ffad.am; Էլեկտրոնային հասցեն՝ info@ffad.am

Հայաստանում ներկայացվող միջազգային կազմակերպությունների և բարեգործական հիմնադրամների ամբողջական ցուցակի համար այցելեք <http://www.ngo.am/io/index.asp>

Հայաստանում գործող ՀԿ-ների ամբողջական ցուցակի համար այցելեք՝ www.ngo.am